

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սոցիալական հմտությունների և արժեքային համակարգի
ձևավորման խնդիրները <<Ֆիզիկա>>առարկայի դասա
վանդման գործընթացում:

Հետազոտվող ուսուցիչ՝ Հովսեփյան Գայանե

Շենիկի միջնակարգ դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Վարդանյան Նատալիա

- Երբեք մի արա այն, ինչ չգիտես:
- Սովորիր ապրելպարզ և առանց շքեղությունների:
- Քնելուց առաջ խորհիր այդ օրն արած քո գործերի մասին: (Պյութագորաս իմաստասեր):
- Կշեռքի կողքով չանցնես (այսինքն՝ արդարությունը մի խախտիր)
- Բարձի վրա մի նստիր (այսինքն՝ արածով մի բավարարվիր):
- Միրտդ մի քրքրիր (այսինքն՝ մի տրվի թախձին):
- Կրակը սրով մի թեժացրու (այսինքն՝ զայրացած մարդուն մի ջղայնացրու)
- Քո հարկի տակ մի առ ծիծեռնակներին (այսինքն՝ շատախոսներին և թեթևամիտներին): (Պյութագորաս Իմաստասեր, այլաբանություններ)

Բովանդակություն

1. Ներածություն -----	3-4
2. Գրական ակնարկ -----	5-10
3. Փորձառություն -----	11-12
4. Վերլուծություն -----	13
5. Ամփոփում -----	14
6. Օգտագործված գրականություն ցանկ -----	15

1. Ներածություն

Արդի ժամանակներում, զարգացումների այսպիսի սրընթաց աճը. իրենց ուղակի ներգործությունն են ունենում կրթական համակարգի վրա՝ առաջ բերելով նորանոր խնդիրներ: Հասարակության զարգացման տարբեր փուլերում սովորողների հոգևոր-բարոյական դաստիարակության խնդիրը տարբեր կերպ է լուծվել:

Տարբեր է եղել նաև նրա բովանդակության օրինակով: 44 Օրյա մահասարսուռ պատերազմը մեզ խորհելու տեղիք է տալիս:

Արդյո՞ք կրթությունն ու դաստիարակությունը ճիշտ <<Ռեկսերի>> վրա են դրված. թե մեր պարտության արմատներն ավելի խորն են ձգված ընդհուպ միջև դաս և դասապրոցես: Մենք խորհելու և մտահոգվելու շատ հարցեր ունենք. քանի-որ հայ զինորդ կարող է գումարի դիմաց ինֆորմացիա <<վաճառել>> թշնամուն: Ուրեմն մեր կրթական համակարգում ևս կան բաց և թերի տեղեր: Պարզ և հստակ պետք է գիտակցել, որ արդի դպրոցի առջև ծառայած խնդիրներն ավելին են.

Դպրոցի նպատակը պետք է լինի՝ հայրենասեր, մարդասեր, հոգևոր հարուստ, ակտիվ, բարձր բարոյական նորմերով, իր երկրի պատմությունն ու ավանդությունները հարգող, ուրիշի հոգսը կիսող քաղաքացիների դաստիարակությունը:

Այսպիսով, ուսուցիչը բացի ընդհանուր ուսումնական խնդիրներից պետք է նաև դաստիարակչական խնդիրներ լուծի:

Ցավոք, շատ ծնողներ զբաղված են օրվա հացի փողը վաստակելով, և երեխաների դաստիարակությունը աչքաթող է արվում: Դպրոցը պիտի կրկնակի աշխատի նման երեխաների հետ և սերնդի հոգևոր-բարոյական դաստիարակությունը պետք է ընթանա, որպես շարունակական պրոցես ու կրի համակարգված, այլ ոչ թե դիպվածային բնույթ: Դաստիարակություն դերը գնալով աճում է, քանի որ արագ են փոխվում կենսական նպատակներն ու բարոյական կողմնորոշիչները: Նվազել է հասարակության դերը աճող սերնդի հոգևոր-բարոյական դաստիարակության հանդեպ: Արդյունաբերական տնտեսությունը վերաճում է գիտելիքների տնտեսություն, իսկ հասարակությունը դառնում է տեղեկացված:

Անընդհատ փոխվում է աշխատանքային միջավայրը, նորովի են կազմավորվում և վերաբաշխվում աշխատատեղերը: Որակյալ մասնագետների պահանջը առաջնահերթ է դարձնում աշխատանքային շուկայի պահանջներին հարմարվելու կարողությունը:

Կրթության դերը օրեցօր աճում է: Կրթությունը վերաճում է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորման՝ զարգացնելով համագործակցության, հանդուրժողականության, համակեցության և այլ արժեքային որակներ: Յուրաքանչյուր, այդ թվում նաև ֆիզիկայի ուսուցչի առաջ կանգնվում է առարկայի ուսումնական դասընթացի նյութերով արժեքների սահմանակարգի ձևավորման սովորողների անձի դաստիարակության խիստ բարդ և կարևոր խնդիրը: Քանիցս պետք է մշակել և վերանայել ֆիզիկայի ուսուցման ռազմավարական նշանակությունը:

Որպեսզի ֆիզիկա առարկան յուրաքանչյուր աշակերտի համար անձնային նշանակություն ստանա, անհրաժեշտ է, որ դասի ընթացքում ստեղծվի ստեղծագործական համագործակցության մթնոլորտ, խրախուսվի իմացական ցանկացած գործընթաց, խրախուսվի յուրաքանչյուր նախադասություն, յուրաքանչյուր իմացական փորձ:

2. Գրական ակնարկ

ՀՀ - ում ձևավորվել է ժողովրդավարության և ազատական տնտեսության վրա հենվող քաղաքացիական հասարակություն: Կյանքի բոլոր ոլորտներում տեղի են ունենում համակարգային փոփոխություններ, որոնք պայմանավորված են ոչ միայն ազգային առանձնահատկություններով, այլ համաշխարհային զարգացումներին բնորոշ աշխարհաքաղաքական ժողովրդավարական, մշակութային, սոցիալական գործոններով:

Պետության և ազգի անվտանգության հզորացման գործում գերակա խնդիր է դառնում պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորումը: Արդյունքում առաջացան դաստիարակության համակարգի կառուցման որոշակի նախադրյալներ և իրական հնարավորություններ: Դրանք իրենց մեջ ներառում են հետևյալ ասպեկտները.

Բարոյական, որը ենթադրում է ոչ միայն տեսնել, հասկանալ և զգալ գիտության գեղեցկությունը, այլ նաև հասկանալ գիտության և տեխնոլոգիաների նվաճումների խելամիտ օգտագործման անհրաժեշտությունը՝ հանուն մարդկային հասարակության հետագա զարգացման և շրջակա միջավայրի պահպանության:

Քաղաքացիական, որը ենթադրում է ակտիվ կենսադիրքորոշմամբ ստեղծագործ անձի ձևավորում, որը հարգանքով է լցված գիտություն և տեխնիկա ստեղծագործների հանդեպ, որոնք ապահովում են ֆիզիկայի առաջատար դերը տեխնիկայի արդի աշխարհի ստեղծման գործում:

Հայրենասիրական, որը ենթադրում է հայրենիքի, նրա հարստության և մշակութային ավանդությունների մասին տեղեկությունների ուսումնասիրում , որն օժանդակում է իր քաղաքի, գյուղի, ավանի հանդեպ սիրուն, դաստիարակում է իր երկրի քաղաքացուն:

Առողջապահական, որը ենթադրում է գիտելիքների ձևավորում հանուն առողջ կենդանակերպի, մարդու և հասարակության անվտանգ կենսագործունեության ապահովման:

Կարելի է պնդել, որ արժեքների համակարգը սովորողի ուսումնական գործունեության մեջ պետք է կարևոր, վճռող տեղ զբաղեցնի որոշելով նրա նախապատվությունները, հետաքրքրություններն ու արարքներն առարկայի յուրացման պրոցեսում: Այդպիսով, հնարավոր դարձավ ձևակերպել հետևյալ դաստիարակչական խնդիրները, որոնք անհրաժեշտ է լուծել ֆիզիկայի դասերում:

1. Սովորողներին ծանոթացնել գիտության և տեխնիկայի դասականների ստեղծագործություններին՝ որպես անձի դաստիարակության ու ինքնաիրացման միջոց:

Ֆիզիկայի դասերին դիմելով նշանավոր ֆիզիկոսների կենսագրությունների հետ կապված նյութերին, վերլուծելով դրանք, սովորողը հաղորդակցվում է ստեղծագործական գործունեության արժեքներին, ծանոթանում է իր մասնագիտության մեջ հաջողված աշխատանքի ավգորիթմներին, և արդյունքում մշակում է գիտական գործունեության, գիտական գիտելիքի և գիտության մասին իր սեփական կարծիքը: Այս ամենն անկասկած, դրականորեն կզդի սովորողի ակտիվության վրա, կդրդի նրան պատասխանատվությամբ հետազոտելու ծրագրային նյութը:

Նշենք այն պայմանները, որոնք ապահովում են ֆիզիկայի ուսուցման դպրոցում կենսագրական նյութերի օգտագործման արդյունավետությունը:

- Նախ այդօրինակ տեղեկությունները պետք է նվազագույն լինեն իրենց բովանդակության ծավալով և ուսումնական ժամանակի ծախսերի առումով: Անհրաժեշտ է նախապես առանձնացնել նշանավոր ֆիզիկոսներին, որոնց կյանքն ու գործունեությունը պետք է ներկայացվի քիչ թե շատ հիմնավոր:
- Կենսագրական նյութը պետք է կապված լինի կոնկրետ նյութի հետ, ներառվի ընթացիկ նյութի շարադրման տրամաբանության մեջ: Անհրաժեշտ է սովորողների գիտակցությանը հասցնել այն, թե կոնկրետ ինչ է արել այս կամ այն գիտնականը, ինչպես են նրա հայտնագործությունները կամ գյուտերը ծառայում մարդկության բարօրությունը:

Օրինակ Գալիլեո Գալիլեյը՝ կապված իներցիայի և ազատ անկման երևույթի ուսումնասիրման հետ, Լոմոնոսովը կապված նյութի կառուցվածքի մոլեկուլային-կինետիկ տեսության ուսումնասիրման հետ, Լեբեդևը՝ գազերի ճնշումն ուսումնասիրելի, Ցիալկովսկին և Կորոլյովը՝ տիեզերական տարածության յուրացման հարցերն ուսումնասիրելիս, Կորչատովը՝ միջուկային ռեակտորի կառուցվածքը ուսումնասիրելիս և այլն:

Կենսագրական նյութը պետք է խթանի ուսումնական բարդ նյութի յուրացումը: Այս դեպքում նոր նյութի մատուցումը պետք է սկսվի գիտնականի գյուտարարական տաղանդը, նպատակին հասնելու նրա աշխատասիրությունն ու համառությունը ցույց տվող անջնջելի, հուզականորեն հագեցած օրինակով: Օրինակ. նպատակահարմար է պատմել Ֆարադեյի կողմից էլեկտրոմագնիսական մակաձման երևույթի հայտնագործությունը, կամ Պ. Կյուրիի կողմից ռադիոակտիվության հայտնագործությունը:

Չորրորդ՝ Կարևոր է սովորողներին ծանոթացնել գիտնականի մտածողության ոճին: Գիտնականների ստեղծագործության հետ ծանոթանալիս սովորողները պետք է տեսնեն ստացված արդյունքները մարդկանց պրակտիկ կարիքներին ծառայեցնելու նրանց ձգտում, նրանց բարձր քաղաքացիականությունը: Օրինակ Ցիոլկովսկու, Կորոլյովի կողմից տիեզերքի յուրաման փշոտ ճանապարհը. ինչպես հետազոտում ջերմամիջուկային ռումբի մշակման աշխատանքներին իր մասնակցությունն արդարացրեց ակադեմիկոս Ա. Սախարովը:

2. Հիմնարար ֆիզիկական տեսությունների և գիտափորձերի, հետազոտության մեթոդների ուսումնասիրության հիման վրա սովորողների մեջ ձևավորել պատկերացում առ այն, թե ինչպիսի դժվարությամբ են ձեռք բերվում, հիմնավորվում ու կառուցվում գիտական գիտելիքները, ձևավորվում համոզմունքներ աշխարհի գիտական պատկեր և մարդու համար նրա կարևորության մասի: Աշխարհայացքային արժեքների ձևավորված համակարգը կարող է սովորողի ընդհանուր կուլտուրայի և բազմազան ու բարդ փորձարարական միջոցներով և ոչ պակաս տեսական մտակառուցումներով ֆիզիկայի աշխարհի միջև կամրջի դեր

կատարել: Արդյունքում ֆիզիկական գիտելիքների ու պատկերացումների աշխարհը ձեռք է բերում մշակույթի արժեք:

Ժամանակակից կյանքում գիտնականի տեղի ու դերի , գիտության, մարդու և բնության փոխազդեցության, անձնային և համամարդկային խնդիրների լուծման մեջ բարոյական արժեքների որոշիչ դերի մասին հարցերի քննարկումները կօգնեն սովորողներին կուսակելու այդ պրոբլեմների մասին անձնային դատողությունների փորձ: Նրանց մեջ պետք է ձևավորվեն բարոյական հայացքներ ու համոզմունքներ, արժեքային դիրքորոշումներ, որոնք հնարավորություն կտան դպրոցականներին օբյեկտիվորեն գնահատել իր և շրջապատող մարդկանց վարքի մարդկայնության չափը:

Սովորողներին ֆիզիկայի դերը , ասենք, հայրենիքի պաշտպանության և ռազմական տեխնիկայի ստեղծման մեջ բացահայտելով, ֆիզիկայի դասերինուսումնասիրվող ֆիզիկական երևույթների ու օրենքների ռազմական տեխնիկայում կիրառման օրինակներով, ապագա զինվորին անհրաժեշտ պրակտիկ կարողությունների ձևավորումով դրվում են սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության հիմքերը:

3. Զարգացնել հուզական-արժեքային մտածողությունը գիտության և արվեստի փոխազդեցության օրինակով:

Ժամանակակից ֆիզիկայի արժեքային կողմերի վերլուծությունը արդի պատմական նյութի հիմքի վրա (ատոմային էներգիայի օգտագործումը խաղաղ և ռազմական նպատակներով, մթնոլորտի աղտոտումը և էկոլոգիական խնդիրների լուծումը ֆիզիկայի օգնությամբ և այլն) օգնում է դաստիարակելու քաղաքացի, հումանիստ և խաղաղության պայքարի մարտիկ:

4. Քննադատական մտածողության ձևավորումը հակազիտական և միստիկական տրամադրությունների վերլուծության ժամանակ:

Եթե ֆիզիկայի դասերին լուսաբանել խոշորագույն տեխնիկական նվաճումները, արթնացնել սովորողների մեջ ֆիզիկայի և տեխնիկայի դիալեկտիկական փոխազդեցության փաստերի վերլուծության ձգտում, համակարգել

և ընդհանրացնել բնության երևույթների իմացության անձնային նշանակության մասին արժեքային դատողությունները, ինչպես նաև նրանց պրակտիկայում կիրառելու հմտությունները, ապա այդ ամենը աշակերտների մեջ կձևավորի աշխարհայացք և ստեղծագործական մտածողություն: Նման մոտեցումը կօգնի նրանց մեջ դաստիարակելու գիտատեխնիկական կուլտուրայի հիմքերը, կձանոթացնի տեխնիկական խնդիրներին լուծման նմուշների հետ, պատկերացում կտա գիտնականի և ինժեների համագործակցության արգասավորության մասին: Արդյունքում սովորողների մեջ երևան կգա արդի գիտության պրակտիկ հնարավորությունների ու նվաճումների հանդեպ արժեքային վերաբերմունք:

5. Զարգացնել մարդու՝ որպես բնության բաղադրատարրի, որպես ֆիզիկական իմացության օբյեկտի մասին արժեքային պատկերացումները:

Այս խնիրը լուծելիս անհրաժեշտ է ընդգծել մարդկային օրգանիզմի գոյության ու գործառության հետ կապված ֆիզիկական երևույթների մասին պատկերացումների կարևորությունը, հիմնավորել սովորական պայմաններում և էկոլոգիական ճգնաժամերի ժամանակ մարդու կենսագործունեության հիմնական պարամետրերի հաշվառման անհրաժեշտությունը: Արդյունքում սովորողների մեջ կձևավորվեն մարդու՝ որպես բնության օրգանական բաղադրիչի մասին իմացական, գեղագիտական, բարոյական և պրակտիկ արժեքային պատկերացումներ:

6. Սովորողների մեջ ձևավորել պատկերացում առ այն, թե ինչպիսի դժվարությամբ են ձեռք բերվում, հիմնավորվում ու կառուցվում գիտական գիտելիքները, ձևավորվում համոզմունքներ աշխարհի գիտական պատկերի և մարդու համար նրա կարևորության մասին: Սովորողների մեջ պետք է ձևավորվեն բարոյական հայացքներ և համոզմունքներ, արժեքային դիրքորոշումներ, որոնք հնարավորություն կտան դպրոցականներին օբյեկտիվորեն գնահատել իր և շրջապատող մարդկանց վարքի մարդկայնության չափը:

7. Սովորողների գիտակցության մեջ շեշտադրել ֆիզիկայի դերը հայրենիքի պաշտպանության և ռազմական տեխնիկայի ստեղծման մեջ բացահայտելով , ֆիզիկայի դասերին ուսումնասիրվող ֆիզիկական երևույթների և օրենքների ռազմական տեխնիկայում կոնկրետ կիրառման օրինակներով, ապագա զինվորին

անհրաժեշտ պրակտիկ կարողությունների ձևավորումով դրվում են սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության հիմքերը:

8. Չարգացնել հուզական արժեքային մտածողությունը գիտության և արվեստի փոխազդեցության օրինակով:

Ժամանակակից ֆիզիկայի արժեքային կողմերի վերլուծությունը արդի պատմական նյութի հիմքի վրա օգնում է դաստիարակելու ազնիվ և արժանի քաղաքացի:

9. Քննադատական մտածողության ձևավորումը:

Բնության երևույթների իմացության արժեքային դաստիարակությունները, ինչպես նաև պրակտիկայում դրանց կիրառելու հմտությունները աշակերտների մեջ կձևավորեն գիտական աշխարհայացք և ստեղծագործական մտածողություն:

Փորձառություն

Ըստ իս ֆիզիկայի դասերին գլոբալ էկոլոգիայի հարցերի քննարկման նշանակությունը կայանում է այն բանում, որ աշակերտների մոտ դրսևորվում է գլոբալ էկոլոգիայի պրոբլեմները լուծելու ձգտում:

Օրինակ՝ օդի որակի վերաբերյալ քննարկումների ժամանակ իմ աշակերտները համեմատեցին և վերլուծեցին օդի աղտոտմամբ պայմանավորված հիվանդությունները և մահացության ցուցանիշների տարբերությունները պայմանավորված, թե որտեղ է ապրում և աշխատում մարդը: Աշակերտները կարողացան ուսումնասիրել գիտական տարբեր հասարակություններ, կարողացան որոշել օդի որակի ինդեքսը և այն կապեցին ջերմաստիճանի հետ: Գտան պատճառահետևանքային կապերը: Այսինքն՝ համեմատության և վերլուծության բոլոր մեթոդներով կարողացան տեղափոխվել արդարության և հավասարության սոցիալական հարցերի դաշտ:

Բնապահպանական դաստիարակության՝ հատկապես էներգաարդյունավետության ուսուցման համար անհրաժեշտ է ֆիզիկայի գործնական ժամերին կիրառել նախագծային մեթոդներ, որը միտված կլինի ուսուցման այլընտրանքային՝ նոր ձևերի ներդրմանն ու կիրառմանը: Ուսուցման գործընթացում մեր հիմնական գործը պետք է լինի աշակերտներին ուղղորդելը: Ոչ միշտ է ճիշտ պատրաստի նյութը նրանց մատուցելը: աշակերտները պետք է ունենան պրպտուն միտք և փորձեն ինքնուրույն նյութեր բերել և դասն ավելի հետաքրքիր դարձնել: Առարկան արդյունավետ դասավանդելու համար, ես հաճախ եմ (գրեթե միշտ) թեմաներ կապում կյանքի հետ և ցույց տալիս, որ դրանք մեր կյանքի հիմքն են: Հաճախ պատմում եմ ավանդազրույցներ, Օրինակ այն, որ հին Հայաստանի 7 իմաստուններից է եղել Թալեսը: Թալես Միլոտեսցու դեռատի դուստրը փորձել է մաքրել իր սաթե իլիկը մանր թելերից և փոշուց, նա նկատում է, որ դրանք դարձյալ կաչում են թելին: Հույները սաթի այդ խորհրդավոր հատկություններ էլ են հայտնաբերել: Շփելով սաթը մթության մեջ, տեսել են, թե ինչպես է ամբողջ կտորը արձագում կապտավուն կայծեր, որոնք ուղեկցվում են ճայճայթուններով: Սաթի խորհրդավոր հատկությունները գիտական լուրջ ուսումնասիրման առարկա է

դարձել Թալեսից 2000 տարի անց: Մաթի հասկությունները հետազոտել է անգլիացի բժիշկ և ֆիզիկոս Ուիլյամ Ջիլբերտը, որն անգլիայի Ելիսաբեթ I թագուհու անձնական բժիշկն էր: Ջիլբերտն եկավ մի կարևոր եզրակացության. մագնիսի և սաթի ձգողություններ տարբեր բնույթի են: Այլ կերպ ասած նրան հաջողվեց բազնիսական և էլեկտրական երևույթներն առանձնացնել իրարից և միայն 1,5 դար անց անգլիացի մեկ ուրիշ գիտնականի՝ Ջեյմս Մաքսվելին, հաջողվեց կրկին միավորել էլեկտրականություն ու մագնիսականությունը, բայց արդեն նոր հիմքի վրա: Այս ամենը լսելով աշակերտների հետաքրքրությունը աճում է թեմայի վերաբերյալ և հետագա հաղորդվող նյութն ավելի արագ են ընկալում:

Կամ ջրի մասին, նրա ագրեգատային վիճակների մասին խոսել մեջբերել հունական փիլիսոփայության հայր Հերակլիտի խոսքերը. <<Ջուրն ամեն ինչի աղբյուրն է տիեզերքում: ամեն ինչ սկսվում է ջրից>>:

Կարծում եմ արդարացված է ցանկացած մեթոդ, որը տանում է թեմայի հետաքրքրությունը բարձրացնելուն և այն ընկալելի դարձնելուն:

Ի վերջո, կրթությունն ոչ միայն անհատի շահերից է բխում, այլ հասարակության և պետության շահերից: Այն միասնական գործընթաց է, որը նպատակաուղղված է հայ ժողովրդի և մարդկության գիտելիքները, փորձը, հոգևոր ժառանգությունը յուրացնելուն, հարստացնելուն և պահպանելուն: Ինչպես նաև դրանք սերունդներին փոխանցելուն: Մեր երկրում կրթությունը երկրի զարգացման և հզորացման, ինչպես նաև ազգային անվտանգության ապահովման կարևոր գործոն ու երաշխիք է:

Վերլուծություն

Այսպիսով, արժեքները դատողություններ են այն մասին, թե ինչն է կյանքում կարևոր: Դրանք հատուկ համոզմունքներ են, թե որն է ճիշտն ու սխալը: Իսկ ո՞րոնք են կյանքի իրական արժեքները:

- Անձը պետք է հարգի Հայաստանի խորհրդանիշերը, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը:
- Գիտակցի, որ ժամանակակից աշխարհում կրթությունը, գիտությունը, տեխնոլոգիաները մեծագույն արժեքներ են:
- Գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստ, զգային այլ արժեքների կարևորության մասին:
- Լինի ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, օրինապահ և կարևորի բարոյական չափանիշներն ու քրիստոնեական, ինչպես նաև համամարդկային արժեքները:
- Գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ, դրսևորի արժանավայել պահվածք:
- Գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ դրսևորման կարևորությունը:
- Անաչառօրեն գնահատի սեփական ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումն ու գերագնահատումը:
- Դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակասլացություն, արժևորի և գնահատի սեփական և այլոց աշխատանքը:
- Մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը, հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կիրառման գործում:

Ամփոփում

Ուսումնառության ընթացքում աշակերտն էլ իր հերթին պետք է .

- Գնահատի ֆիզիկայի դերը համամարդկային մշակույթի, գիտատեխնիկական առաջընթացի զարգացման գործում:
- Գիտակցի ֆիզիկայի դերը անհատի աշխարհայացքի ձևավորման գործում:
- Կարևորի ֆիզիկա առարկայի դերը տրամաբանական մտածողության, զարգացման գործում:
- Գիտակցի ճշգրիտ գիտելիքների կարևորությունը, դրանց կիրառության արդյունավետությունն առօրյա կյանքում և աշխատանքում:
- Կարևորի մտավոր աշխատանքը, կարողանա նպատակներ և խնդիրներ դնել և նպատակասլաց գործունեություն ծավալել:
- Գնահատի բնության ներդաշնակությունն ու գեղեցկությունը:
- Ձգտի ստեղծագործական աշխատանքի, գեղագիտական հաճույք ստանա դրանից:
- Գնահատի մարդկային գործունեության ազդեցությունը բնության վրա:
- Կարևորի շրջակա միջավայրի պահպանությանը նպատակաուղղված միջոցառումների իրագործմանը:
- Հարգի ինքն իրեն, քանզի գիտությունը ոչ այլ ինչ է, քան բնության մարդկային հայելին, որն արտացոլում է նրան ճանաչողմարդու բոլոր պահանջմունքները, հետաքրքրությունները, արժեքներն ու մտածողության ոճը:

Գրականության ցանկ

1. Լևոն Գրիգորյան <<Ֆիզիկայի պատմության ձեռնարկ>> Երևան 2007
2. Պավել Մատուրյան <<Զրույցներ Ֆիզիկայի մասին>> Երևան 1983
3. Բնագետ ամսագիր 3-4 հատոր, 2004
4. Գարուշ Պետրոսյան <<Ֆիզիկան մեր շրջապատում>>
5. Հանրակրթության մասին օրենքը
6. Վիքիպեդիա <<ազատ հանրագիտարան>>